ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/126/2023-24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 24 հունվարի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող) Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի հունվարի 11-ին, քննելով «Միավորում Հանուն Հայաստանի» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) նախագահ Ժասմեն Բաբայանի կողմից 2021 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չիրապարակելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/126/2023-24 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով վերապահված գործառույթը, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով սահմանված

պահանջների պահպանվածության ստուգման արդյունքում հայտնաբերել է, որ 2021 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը (այսուհետ՝ նաև Տարեկան հաշվետվություն) օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել և օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակվել:

1.2 Վերոնշյալ խախտման հայտնաբերմամբ պայմանավորված՝ Հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 01/2604/49-2023 գրությամբ Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանին է ներկայացրել ծանուցում Տարեկան հաշվետությունը սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու առերևույթ խախտման վերաբերյալ՝ հրավիրելով վերջինիս Հանձնաժողով մասնակցելու Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախատման հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.3 Հանձնաժողովի կողմից 29.11.2023 թվականին պատվիրված նամակով (հետադարձ ծանուցմամբ) Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանին է ուղարկվել գրավոր ծանուցում՝ ներկայանալու Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, փոստային առաքանին վերադարձվել է, կամ ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), ուստի հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի դրույթները՝ այն տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների կայքում և ուղարկվել է անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի ղեկավարին:

1.4 2023 թվականի դեկտեմբերի 22-ին պատշաճ ծանուցված Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/129/2023 արձանագրությունը՝ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 01/3035-2023 գրությամբ Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանին է ուղարկվել 2024 թվականի հունվարի 10-ին, ժամը՝ 12:00-ին նշանակված, Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր:

1.6 Նշանակված օրը և ժամին հրավիրված Հանձնաժողովի նիստի ընթացքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, վարույթի մասնակիցը պատշաճ կարգով չի ծանուցվել գործի քննության տեղի և ժամանակի մասին, որպիսի պայմաններում իրագործելի չի կարող համարվել գործին վարույթի մասնակցի ներկայությունն ապահովելու հնարավորությունը, կասեցրել է գործի վարույթը՝ մինչև կասեցումն առաջացող հանգամանքի վերացումը:

1.7 Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 01/3035-2023 գրությունը ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), ուստի հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 14-15-րդ մասերի դրույթները՝ գործի քննության տեղի և ժամի մասին 2024 թվականի հունվարի 17-ին թիվ 01/149-2024 ծանուցագիրը տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների https://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում՝ հրավիրելով Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանին ներկայանալու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ 2024 թվականի հունվարի 24-ին, ժամը՝ 14:30-ին նշանակված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննությանը մասնակցության համար: Միաժամանակ նույն ծանուցագիրը 2024 թվականի հունվարի 17-ի թիվ 01/163-2024 գրությամբ ուղարկվել է համայնքի ղեկավարին:

1.8 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի մասնակիցը գործի քննության տեղի և ժամանակի մասին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի ուժով պատշաճ ծանուցվել է, Հանձնաժողովը 2024 թվականի հունվարի 24-ին հրավիրված նիստով վերսկսել է գործի վարույթը:

1.9 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանի

բացակայությամբ 2024 թվականի հունվարի 24-ին՝ ժամը 14:30-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

2.1 Վարչական վարույթի մասնակցի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության կապակցությամբ դիրքորոշում չի ներկայացվել, առկա չէ նաև վերջինիս կողմից ներկայացված միջնորդություն:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/126/2023-24 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանը 2021 թվականի ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չի ներկայացրել և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հրապարակել:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը:

4.2 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը:

4.3 . 20.01.2021 թվականի թվականին ուժի մեջ մտած «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-1-Ն

օրենքի անցումային դրույթ հանդիսացող 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունները սույն օրենքի 20-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ 2021 թվականի հաշվետու տարվա վերաբերյալ իրենց տարեկան հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները հրապարակում են մինչև 2022 թվականի սեպտեմբերի 15-ը:

4.4 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը.

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության

պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 189.13--րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը

(պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմին չներկայացնելը կամ դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված վազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման (արարքի) նույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Սույն գործով Կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանի կողմից Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու արարքներում առկա չեն Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, ինչպես նաև առկա չեն Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք:

Սույն գործով խախտման (արարքի) որակական կողմը գնահատելիս Հանձնաժողովն էական է համարում նաև հետևյալ հանգամանքի միաժամանակյա առկայությունը, այն է՝

Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումների գործերով քննության իրավասությունը Հանձնաժողովին վերապահելուց հետո, նշված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և նշված խախտման կապակցությամբ ծանուցում է ներկայացվել առաջին անգամ:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Միավորում Հանուն Հայաստանի» կուսակցության նախագահ Ժասմեն Բաբայանի կողմից Կուսակցության ստացած և ծախսած միջոցների մասին 2021 թվականի տարեկան հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով չներկայացնելու և դա օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու համար Ժասմեն Բաբայանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի՝ **40 000 ՀՀ դրամի չափով**: Տուգանքը պետք է վճարվի գանձապետական **900005001335** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Ժասմեն Բաբայանին սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**